Կնքված պայմանագրի մասին հայտարարություն

Հ ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկի միջնակարգ դպրոցի նախագծի ՀՀ Տավուշի մարզի Սևքարի միջնակարգ դպրոցի տարածքում տեղակապման, տեղակապված նախագծի հեղինակային հսկողության իրականացման և դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների գնում,
A-58TV

Ծրագրի անվանում՝ Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագիր
Երկիր՝ Հայաստան
Վարկի համար՝ 3284-ARM (ԱԶԲ), 4351-ARM
Շնորհված ընկերություն՝ ԽԱՉՄԻՇԻՆ ՍՊԸ և ԻՆՏԵՐԵՎՐՈՍԱՐԳՈՍ ՍՊԸ ՀՁ
Հասցե՝ ՀՀ Տավուշի մարզ, Սևքար
Քաղաք/Մարզ՝ Տավուշի մարզ,
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Պատվիրատու՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ /ՀՏԶՀ/
Պայմանագրի կնքման ամսաթիվ՝ 11 դեկտեմբերի 2024թ.
Գնման ընթացակարգի եղանակ՝ «Ազգային մրցակցային մրցույթ»
Պայմանագրի գումար՝ 1,790,444,744.00 (մեկ միլիարդ յոթ հարյուր իննսուն միլիոն չորս հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:
Տևողությունը՝ շինարարական աշխատանքների մեկնարկից մինչև ավարտը, նախատեսվում է՝ 760 օր
Պայմանագրի շրջանակը.
Նախատեսված է՝
Նախատեսվում է կառուցել նոր, երկհարկանի, նկուղային հարկով, հատակագծում ուղղանկյուն 91.5*35.5մ չափերով կառույց, սեյսմիկ կարանով բաժանված հավասար հատվածամասերի: Նկուղում նախատեսվում է ժամանակավոր թաքստոց: Կառույցը երկաթբետոնե միաձույլ, շրջանակա-կապային հիմնակմախքով, խաչահատվող ժապավենային հիմնահեծաններով, դիաֆրագմաներով և ծածկերով: Բոլոր կոնստրուկցիաները նախագծված են B25 դասի բետոնից և A500c դասի ամրաններից: Տանիքը՝ թեք երկաթբետոնե ծածկի վրայով: 1-5 դասարանների և նախադպրոցական տարիքի երեխաների ուսուցումը նախատեսվում է 1-ին հարկում, բարձր դասարանի աշակերտների ուսուցումը՝ 2-րդ հարկում: Շենքում նախատեսվում են 4 աստիճանավանդակներ, 1 վերելակ: Շենքի տանիքում նախատեսվում է արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում 232 վահանակներով: Դպրոցի ջեռուցումը իրականացվելու է կաթսայատնից, որը շահագործվելու է բնական գազով: Նկուղային հարկի ընդհանուր մակերեսը՝ 596մ2, 1-2-րդ հարկերինը՝ 5957մ2: Հենաշարժողական խնդիրներ ունեցող, սայլակով տեղաշարժվող երեխաների համար նախատեսված են սանհանգույցներ, թեքահարթակ և ամբարձիչ: Իրականացվելու է դպրոցի տարածքի ցանկապատում և բարեկարգում, մարզադաշտի և մարզահրապարակի կառուցում: Կապալառուն պետք է տեղակապի Սասունիկի միջնակարգ դպրոցի նախագիծը Սևքարում: